

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՈՐՁԵԼ ԲԱՌԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: GREEK TERMS FOR TESTING AND THEIR CONNOTATIONS**

Գոյություն ունեն երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն դիտավորյալ ինչ-որ մեկին փորձելու իմաստը.

1. *Dokimazō, Dokimion, Dokimasia*

Այս տերմինը մետաղագործական տերմին է՝ ինչ-որ բանի իսկությունը (այսինքն՝ այլաբանորեն ինչ-որ մեկին) կրակով փորձելով (տես՝ Հատուկ Թեմա. Կրակ): Կրակը ի հայտ է բերում իրական մետաղը և վառում է (այսինքն՝ մաքրում) մետաղախարամը՝ անպետք մետաղը: Այս ֆիզիկական գործընթացը Աստծո համար /և, կամ Սատանայի ու մարդկանց համար/ դարձավ միմյանց փորձելիս օգտագործվող գեղեցիկ դարձվածք: Այս տերմինը գործածվում է փորձելու միայն դրական իմաստով, երբ այն ընդունելի է (տես՝ Հատուկ Թեմա. Աստված փորձում է Իր ժողովրդին /ՀԿ/):

ՆԿ-ում այն կիրառվում է, երբ փորձվում են՝

- ա. եզները՝ Ղուկ.14:19
- բ. մենք՝ 1 Կորն.11:28
- գ. մեր հավատքը՝ Հակ.1:3
- դ. նույնիսկ Աստված՝ Եբր.3:9

Այս փորձերի արդյունքները համարվում էին դրական (տես՝ Հռոմ.1:28, 14:22, 16:10, 2 Կորն.10:18, 13:3,7, Փիլ.2:27, 1 Պետ.1:7), ուստի այս տերմինը փոխանցում է այն գաղափարը, որ մարդը փորձվել է և ճանաչվել՝

- ա. արժանի
- բ. բարի
- գ. անկեղծ
- դ. թանկագին
- ե. պատվարժան

2. *Peirazō, Peirasmus*

Այս տերմինը հաճախ ունի հանցանքը կամ մերժվածությունը գտնելու նպատակով քննության նշանակություն: Այն հաճախ է գործածվում անապատում Հիսուսի փորձության հետ կապված:

- ա. Այն փոխանցում է Հիսուսին թակարդը զցելու փորձի իմաստը (տես՝ Մատթ.4:1, 16:1, 19:3, 22:18, 35, Մարկ.1:13, Ղուկ.4:38, Եբր.2:18):
- բ. Այս (*peirazōn*) տերմինը Մատթ.4:3; 1 Թեսաղ.3:5-ում կիրառվում է որպես Սատանայի անունը:
- գ. Կիրառությունը՝
 - 1) Այն կիրառում էր Հիսուսը մեզ զգուշացնելով չփորձել Աստծուն (տես՝ Մատթ.14:7, Ղուկ.4:12) [կամ Զրիստոսը, տես՝ 1 Կորն.10:9]:
 - 2) Այն նաև արտահայտում է ինչ-որ մի բան անելու փորձ, որը ձախողվել է (տես՝ Գործք 9:20, 20:21, Եբր.11:29):
 - 3) Այն կիրառվում է հավատացյալների փորձությունների և զայթակողությունների իմաստով (տես՝ 1 Կորն.7:5, 10:9, 13, Գաղ.6:1, 1 Թեսաղ.3:5, Եբր.2:18, Հակ.1:2, 13, 14, 1 Պետ.4:12, 2 Պետ.2:9):